Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

84-2
L-88
2250
84
L-88

XVI, 1a.

I 893

6187

19 NOV 2010
20 APR 2006

22 36

Հրատարակութիւն Գ. Գալստեանի

ՊՕԼ ԻՍՍԷՆԹ ԼՈՒԶՕՆԻ

84-2
Լ-88 ար.

ԱՐԻՒՆԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ

(L' Evangile du Sang)

ԳՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆՑՔ ՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

1001
4859

ԹԱՐԳՄ. ՖՐԱՆՍԵՐԷՆԻՑ Տ. ՉԱՒԻՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՍՅԱՍԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1922

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռօտինեանցի
1906

03.05.2013

6187

Дозволено цензурою, Тифлисъ. 10 Марта 1960 г.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ԾՈՎԱԿԱԼ ՋԷԿ ՄԷՆՍՖԻԼԴ, դեռ. ևս երիտասարդ։
ՀԻԳԳԻՆՍ, 45 տարեկան, քաղաքացու շորերով։
ՄԷԼՎԻԼ նաւային տեղակալ (լէյտենանտ), երիտասարդ։
ԺԱՆ, 30 տարեկան, ծովակալի կինը։

Ա. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

ԴԷԿՕՐԱՑԻԱ

Ծովակալի խուց։ Մթութիւն է տիրում։ Էլեկտրական մի լամպ միայն։

ԾՈՎԱԿԱԼ (*Մենակ իր սեղանի առաջ նստած*).— *Վերջապէս ես էլ մարդ եմ և իրաւունք ունիմ դոնէ մի րոպէ մտածելու կնոջս մասին... Ո՛չ, առանց նայելու այս կենդանադրի վրայ, ես աւելի լաւ եմ տեսնում նրան... իմ լիշողութեան մէջ...* (*Խփում են դռան։*) *Մտէք։*

ՄԷԼՎԻԼ.—*Թղթատար նաւակն եկաւ, անա նամակները։* (*Տալիս է ծովակալին։*)

ԾՈՎԱԿԱԼ (*Շտապ կարդալով*).—*Լաւ։* (*Աջ կողմից վերցը-*

նելով նախապէս կնքուած դեղին մի մեծ ծրար։) Ուղարկեցէք շուտով զօրավար Բրնէտին։ Նա երէկ երեկոյեան բանակ էր դրել Մագօրից երկու կիլոմէտր հարաւ, Իֆի ձորակում։ Այս նամակը անպատճառ պէտք է նրան հասցնել մի ժամում։ Ասացէք, մեր ցամաքի հեռագրական կայանն անվնաս է։

ՄԷԼՎԻԼ. Այո, ծովակալ։

ԾՈՎԱԿԱԼ.—Գնացէք։ Ա՛հ մոռացայ. այս էլ յանձնեցէք թղթատար նաւին. մի անձնական նամակ է շարժուն հիւանդանոցների հասցէին։ (Տալիս է մի փոքրիկ սպիտակ ծրար, յետոյ, մութի մէջ Մէլվիլի յետեւից կանում է, երբ նա արդէն մեկնած է լինում։) Յետոյ վերադարձէք ինձ մօտ։

ՍԷԼՎԻԼԻ ՁԱՅՆԸ (Աւելի մեղմ).—Լա՛ւ... ծովակալ...

ԾՈՎԱԿԱԼ (Ձայնատար խողովակից). — Կապիտան Վերնօն... Մենք կէտ առ կէտ կը հետեւենք մեր մշակած ծրագրին։ Այս բոպէիս դրեցի Բրնէտին։ (Միջոց)։ Ո՛չ, մնացէք վերեւում. ես քիչ յետոյ կը բարձրանամ ձեզ մօտ։ (Դռան խփում են։)

ԾՈՎԱԿԱԼ.—Մէջ։ (Մտնում է Մէլվիլ։) Յանձնեցիք։

ՄԷԼՎԻԼ.—Այո, ծովակալ։ Նաւակը՝ աւելի զգուշութեան համար, ծովի բացերից է գնալու, բայց, այնուամենայնիւ, զօրապետ Բրնէտ նամակը կը ստանայ ժամի հինգին։

(Կարճ լռութիւն։)

ԾՈՎԱԿԱԼ.—Գիտէք, Մէլվիլ, որ այս առաւօտ ռմբակոծում ենք։

ՄԷԼՎԻԼ.—Մի քիչ զուշակում էի, ծովակալ։

ԾՈՎԱԿԱԼ.—Ցոյս ունեմ, որ Լայտնինկ նաւի վնասուած տեղերը կարկատուած են արդէն։

ՄԷԼՎԻԼ.—Այո, ծովակալ, մի ժամից ի վեր։

ԾՈՎԱԿԱԼ.—Ժամի քանիսն է, Մէլվիլ։

ՄԷԼՎԻԼ.—Չորսից տաս բոպէ պակաս, ծովակալ։

ԾՈՎԱԿԱԼ (Պատից կախ արած խրոնոմէտրին մտիկ տալով).—Ճիշտ է։ Հէնց որ լուսաբացը մեզ թոյլ տուեց ուղիղ նշան դնել... շատ ուղիղ, հասկանում ես, Մէլվիլ...

ՄԷԼՎԻԼ.—Այո, ծովակալ։

ԾՈՎԱԿԱԼ.— . . . Այն ժամանակ իմաց տուեցէք ինձ։ Ռմբակոծութեան նշանը ես ինքս պիտի տամ նանատորմին։ Ժամի քանիսին է բացւում լոյսը. նշանակել էք երէկ։

ՄԷԼՎԻԼ.—Այո, ծովակալ, հինգից քառորդ անց։

ԾՈՎԱԿԱԼ.—Ճիշդ է։ Այս հրամանը Ուօտի միջոցով հաղորդեցէք պահականաւին։ Նորից յիշեցնում եմ ձեզ. ոչ մի նշան, բացի այս լամպից. բոլոր ճրագները պէտք է անպայման հանդցնել։ Ուօտը թող լուր բերէ ձեզ այս հրամանի գործադրութեան մասին։ Գնացէք։ (Մէլվիլ գնում է, յետոյ իսկոյն վերադառնում է։)

ՄԻԼՎԻԼ.—Պ. Հիգգինսը հարցնում է, թէ կարելի է արդեօք մտնել։

ԾՈՎԱԿԱԼ (Ոտքի վրայ մի քարտէզի մտիկ տալով).—Թո՛ղ գայ։

ՀԻԳԳԻՆՍ.—Սիրելիս, մի քիչ քնել էի, այս բոպէիս զարթնեցի, և ոչինչ, ոչինչ չեմ հասկանում շուրջս անցած դարձածից։

ԾՈՎԱԿԱԼ.—Ի՞նչ է պատահել։

ՀԻԳԳԻՆՍ.—Ամենքը տախտակամածի վրայ լուռ

ու մունջ, մրջունի նման վազվզում են. հարց ես տալիս՝ ոչ ոք չի պատասխանում. ուզում ես գրել՝ սենեակումդ լույս չկայ։

ԾՈՎԱԿԱԼ.—Դա նախազգուշության համար է. բոլոր ճրագները հանգցնել եմ տուել։

ՀԻԳԳԻՆՍ.—Դարձեալ ոչինչ չեմ հասկանում։

ԾՈՎԱԿԱԼ.—Ի՛սկ որ քնում ես։ Մագօրից երեք մղոնով միայն հեռու ենք։

ՀԻԳԳԻՆՍ.—Մի՞թէ։

ԾՈՎԱԿԱԼ (Պատրաստուելով բանալ նաւի լուսամուտը, որ պինդ փակուած է).—Ա՛յ, սպասիր, կը տեսնես։ Հանգցրու լոյսը։

ՀԻԳԳԻՆՍ.—Ո՛րքան նախազգուշութիւն...

ԾՈՎԱԿԱԼ (Բաց լուսամուտից).—Տես, քաղաքի ճրագները նշմարւում են արդէն։

ՀԻԳԳԻՆՍ (Դէպի լուսամուտը կռանալով).—Ո՞րտեղ են։

ԾՈՎԱԿԱԼ.—Այնտեղ, այնտեղ, դէպի աջ։

ՀԻԳԳԻՆՍ.—Չեմ տեսնում...

ԾՈՎԱԿԱԼ.—Ի՞նչպէս թէ չես տեսնում. լաւ նայիր...

ՀԻԳԳԻՆՍ.—Ա՛, տեսա՛յ, տեսա՛։ Է՛, լեռո՛։ Ի՞նչ ես մտադիր անելու։

ԾՈՎԱԿԱԼ (Փակելով լուսամուտը եւ լամպը կրկին վառելով).—Կառավարութիւնը գործելու կատարեալ ազատութիւն է տալիս ինձ։ Ա՛յ, տես։ Ա՛հ, այս նամակը քոնն է. առ։

ՀԻԳԳԻՆՍ.—Խմբագրութիւնից է. լեռով կը կարդամ քեզ։ Ո՞րտեղ է կառավարութեան հեռագիրը. տեսնեմ։

ԾՈՎԱԿԱԼ.—Ահա։

ՀԻԳԳԻՆՍ (Կարդալով).—«Ձեր բարեհայեցողութեան և նախաձեռնութեան ենք թողնում ընտրել յարձակման ծրագիրը։ Հարկաւոր է անմիջական գործողութիւն։» Իսկ դու ինչ վճռեցիր։

ԾՈՎԱԿԱԼ.—Շատ քիչ հաւանականութիւն կայ, որ ծովափից մեզ նկատեն արշալոյսից առաջ։ Գիշերը մութ է և էլեքտրական ցոլացուցիչներ չունեն նրանք։ Հետևաբար, լուսաքացին յանկարծ կը ռմբակոծեմ Մագօրը։ այդ իմ իրաւունքն է ամեն մի պատերազմական նաւահանգստի վերաբերմամբ...

ՀԻԳԳԻՆՍ.—Բրաւո։

ԾՈՎԱԿԱԼ.—Եւ օգտուելով ռմբակոծութեան առաջ բերած խառնաշփոթութիւնից, Բրնէտ մի ժամից յետոյ քաղաքը կը վերցնէ հարաւի կողմից։

ՀԻԳԳԻՆՍ.—Բրաւիսսիմօ։ Բայց ինձ թւում է, որ Բրնէտը շատ քիչ զօրք ունի։

ԾՈՎԱԿԱԼ.—Աւելի լաւ։ Խնայողութիւն արած կը լինենք։

ՀԻԳԳԻՆՍ.—Ա՛հ, մի ավ մարդ և հանճար... դու մի հարուածով վարպետ ես հռչակւում։ Շատ շնորհակալ եմ, բարեկամս, որ ինձ քո նաւի վրայ առար։ Մի օր փոխարէնը կը հատուցանեմ։ Շնորհակալութիւն նոյնպէս մեր լրագրի երկու մրլիոն հինգ հարիւր հազար ընթերցողների կողմից։

ԾՈՎԱԿԱԼ.—Ա՛յդքան ընթերցող... խօսքով անշուշտ։

ՀԻԳԳԻՆՍ.—Ո՛չ, սիրելիս, մեր բաժանորդագրութեան տոմարի հաշուով։ Պատերազմի ժամանակ մեր թերթը երեք տպագրութեամբ է լոյս տեսնում. Միա-

ցեալ-Նահանգներում, Անգլիայում և Եւրոպական ցամաքում։ Այս քեզ երեք տպագրութիւն։ Բայց թողնենք այդ. մի թէ դու չես վախենում նրանց ականատեսներից։

ԾՈՎԱԿԱԼ.—Է՛, խեղճ ու կրակ հին դաշտերից պիտի վախենամ, որոնք առանց այն էլ իրանց նաւատորմի հետ լիսուն մղոն հեռու են այստեղից։ Իսկ նրանք կարծում են, թէ ես ուրեմն մղոն հեռաւորութեան վրայ եմ գտնւում։

ՀԻԳԳԻՆՍ.—Ուրեմն չմասես, մեզ համար ոչ մի վտանգ չկայ։

ԾՈՎԱԿԱԼ.—Ի՞նչպէս չէ. մենք Սպիտակ-Ամրոցի հրաձգութեան գծի մէջ ենք գտնւում և ես մի քիչ վախենում եմ նրա խոշոր թնդանօթներից։ (Թփում են դրան։) Մաէ՛ք։

(Մտնում է Մելվիլ՝ շտապով։)

ՄԷԼՎԻԼ.—Ծովեզերքից եկող մի նաւակ եմ նշմարում, որ գալիս է ուղղակի դէպի մեզ։

ԾՈՎԱԿԱԼ.—Ա՛յ քեզ բան։ Պատերազմական, թէ ձկնորսական նաւակ է։

ՄԷԼՎԻԼ.—Չկարողացայ նրան հեռուից լուսաւորել... որովհետև այդպէս էր ձեր մասնաւոր հրամանը ծովակալ...

ԾՈՎԱԿԱԼ.—Ցետո՛յ, յետո՛յ։

ՄԷԼՎԻԼ.—Երկար ժամանակ վարանման մէջ մնացի։ Բայց այժմ, որ նաւակը միայն 400 մէտր մեզանից հեռու է, կարողանում եմ բաւական պարզ տեսնել։ Դա մի շոգեմակոյկ է և կրում է սպիտակ դրօշ։ Թողնենք, որ մօտենայ։

ՀԻԳԳԻՆՍ.—Աւելի լաւ է կրակի բռնեն։

ԾՈՎԱԿԱԼ.—Վստահ էք որ սպիտակ դրօշ է կրում, Մէլվիլ։

ՄԷԼՎԻԼ.—Վստահ։

ՀԻԳԳԻՆՍ.—Գոնէ հրամայիր որ գրաւեն. յետոյ կարող ես բանակցել, որքան քէֆդ տայ։

ԾՈՎԱԿԱԼ.—Ի՞նչեր ես ասում։ Եթէ սպիտակ դրօշ է կրում, պէ՛տք է որ մօտենայ... (Մէլվիլի) Թողէք մօտենալ և եղելութիւնը յայտնեցէք։

(Մէլվիլ գնում է։)

ՀԻԳԳԻՆՍ.—Ի՞նչ, ուրեմն դու նրանց հետ բանակցութիւն պիտի վարես։

ԾՈՎԱԿԱԼ.—Երբէք։ Կընդունեմ նրանց պատուիրակը, եթէ եկողը իսկապէս պատուիրակ է, բայց կը մերժեմ ամեն համաձայնութիւն։

ՀԻԳԳԻՆՍ.—Ուրեմն որոշումդ հաստատ է։ Շատ ուրախ եմ։ Միայն մի փոքրիկ մեղադրանք ունեմ քեզ ուղղելու. դու թշնամուդ արհամարել չես իմանում։

ԾՈՎԱԿԱԼ.—Պատերազմը ներշնչում է յարգանք դէպի թշնամին։ Բացի այդ, եթէ այս պատերազմի պատճառները քննենք, կարող ենք ասել, թէ իրաւունքը մեր կողմն է...

ՀԻԳԳԻՆՍ.—Հանգ ես անում։ Այդ յետաղէմները, այդ վայրերիները... Կուլտուրայի բոլորովին անընդունակ լինելով հանդերձ՝ յանդգնում են արգելք հանդիսանալ մեր քաղաքակրթական շարժումին։ Նրանք համարձակւում են փակել մեր առաջ վաճառականները... Եթէ ցանկանում էին պատերազմից խուսափել, թող ներողութիւն խնդրէին մի ամիս առաջ մեր հիւպատոսարանի դրօշակի դէմ կատարուած նախատինքի համար...

Իսկ այժմ մենք նրանց կը թողնենք հանգիստ, եթէ միայն կընդունեն մեր հովանաւորութիւնը...

ԾՈՎԱԿԱԼ.—Վերջապէս։

ՀԻԳԳԻՆՍ.—Եւ յետոյ, նրանց պատերում մեր ռումբերի բացած պատռուածքներից ջրի նման կը հոսեցնենք մեր դրամը և նրանք երախտապարտ կը լինեն մեզ, որ յաղթել ենք իրանց։

ԾՈՎԱԿԱԼ.—Հետաքրքիր է իմանալ, թէ այդ նաւակի հետ մեր հանդիպումը պարզ դիպուածի արդիւնք է, թէ նրանք լուր են ստացել մեր ներկայութեան մասին...

ՀԻԳԳԻՆՍ.—Իսկ ես մտածում եմ, թէ ինչ ունէր ինձ հաղորդելու մեր խմբագրութիւնը... (Կսրդում է ըստացած նամակը։)

ԾՈՎԱԿԱԼ (Ձայնատար խողովակից).—Մէլվիլը տեղեկացնում է ինձ, որ մի նաւակ գալիս է դէպի մեզ... Այո՛... անկասկած անլարմար ժամանակ է... Ինչ արած։ Եթէ ծովեզերքից մեզ նշմարել են, հարկաւոր է թշնամու ուշադրութիւնը շեղեցնել... Ո՞րն է այս բոպէիս աջ թևի վերջին յածանաւը։ Լա՛։ Յետո՛յ։ Լա՛։ Լուր տուէք Գլադըստոնի, որ վեր առնէ խարիսխը և այնպէս ձևացնէ, թէ պատրաստւում է լողալ դէպի բացերը... Ո՛չ։ Քսան (Նստում է խրօնոմէտրին։) քսան և հինգ բոպէից յետոյ։ Հէնց որ ռմբակոծութիւնն սկսեց, թող մտնէ կռուի շարքը... Այո՛, այո՛։ Գալով Լինկօլնի՝ առանց խարիսխը վեր առնելու թող այնպէս ցոյց տայ, թէ հնռանում է... իսկ Ուօտը թող շարունակէ իր պտոյտը։ Ծրագիրը նոյնն է մնում։ (Թողնում է ձայնատարը եւ ուղղուելով Հիգգինսին։) Ցոյս ունիմ վատ լուրեր չստացաք։

ՀԻԳԳԻՆՍ.—Ո՛չ, ո՛չ... Ի դէպ, վերջերս կնոջիցդ որևէ լուր ստացել ես։

ԾՈՎԱԿԱԼ.—Ո՛չ մի լուր, տասն օրից իվեր։ Բրնէտի շարժուն հիւանդանոցների հետ էր. Բրնէտ ամեն ջանք գործ պիտի դնէ նրանց պաշտպանութեան համար։ Այդ կողմից ոչ մի երկիւղ չունեմ։

ՀԻԳԳԻՆՍ.—Աշխարհիկ կանայք գժուել են, ինչ, ներկայումս։ Նրանք հետևում են բանակին, վարում են Կարմիր Խաչի ընկերութիւնը, մի խօսքով վիրաւորների գահլէն են տանում։ Երեք հարիւրի չափ կան... Բիչ էլ չեն։

ԾՈՎԱԿԱԼ.—Պատերազմը հետզհետէ մարդասիրական է դառնում։ Ահա ութ օր է, որ մենք ուղարկել են թշնամու կողմը մի շարժուն հիւանդանոց։

ՀԻԳԳԻՆՍ.—Ի՞նչ կարիք կար։

ԾՈՎԱԿԱԼ.—Գթութիւնը հայրենիք չունի։

ՀԻԳԳԻՆՍ.—Դու պիտի տուժես այդ խօսքի համար։ Կամենում ես որ պատերազմը շուտ վերջանայ. —վայրագ եղիր։

ԾՈՎԱԿԱԼ.—Վայրագութեան կարիք չկայ, անխնայ լինելն էլ կը բաւէ։ Ես այդ կապացուցանեմ քեզ հէնց այս առաւօտ։ Բայց ես, որ պատերազմի մարդ եմ, այնուամենայնիւ սարսռառով եմ տալիս առաջին ռումբն արձակելու հրամանը։

ՀԻԳԳԻՆՍ.—Շատ հասկանալի է. այդ կանանց ներկայութիւնը ջղագրգիռ է դարձնում ձեզ... Բարով խերով թոյլ չտային նրանց։

ԾՈՎԱԿԱԼ.—Ո՛րքան քիչ ես ճանաչում ինձ... Իսկ գալով կանանց, ընդհակառակը նրանք առաջին քայլից զլում են իրանց ստանձնած պաշտօնի անախորժութիւնը։ Ա՛յ, օրինակ, կինս. նրա առաջին նամակից երևում էր,

որ դեռ ես իր պաշտօնավայրը չհասած՝ չատ էր յուզուել պատերազմից։ Ի՞նչ պատահեց քեզ։

ՀԻԳԳԻՆՍ.—Ոչինչ, ոչինչ... Անկասկած նա յուզուել է վիտենայով՝ որ դու էլ վտանգի մէջ ես... Շատ պարզ է, հազիւ մի տարի է ինչ ամուսնացել էք։

ԾՈՎԱԿԱԼ.—Պատերազմի յայտարարութիւնը այնքան չուտ կատարուեց, որ մինչև անգամ ժամանակ չունեցայ նրան մնաս բարով ասելու։ Ուզում ես, քեզ մի ծիծաղելի բան պատմեմ... Բայց ինչ ունես, վերջապէս։

ՀԻԳԳԻՆՍ.—Ո՛չինչ, ոչինչ, հաւատացնում եմ... պատմիր, տեսնենք։

ԾՈՎԱԿԱԼ.—Երկու տարի առաջ, երբ ծանօթացանք միմեանց հետ, ամառանոցում, և վճռեցինք ամուսնանալ, նա ոչ մի հպարտութիւն չզգաց, որ շուտով մի նաւազնացի, մի փոխ-ծովակալի—այն ժամանակ փոխ-ծովակալ էի—կինն էր լինելու. այլ ընդհակառակը այն միտքը, թէ ես կարող էի պատերազմի գնալ, նրան մի տեսակ զարմանք պատճառեց...

ՀԻԳԳԻՆՍ.—Է՛հ, ինչ ուզում է լինի. աւելի լաւ է քեզ ամեն ինչ յայտնեմ։ Հէնց այս նամակով Ջոնսընն՝ մեր խմբագրութեան քարտուղարը, որ այժմ բանակումն է, ինձ տեղեկութիւն է տալիս քո կնոջ մասին։

ԾՈՎԱԿԱԼ.—Ժանը հիւանդ է։ Ասա՛ չուտով։

ՀԻԳԳԻՆՍ.—Ո՛չ, բարեկամս, նա դժուել է... կամ դրա նման մի բան...

ԾՈՎԱԿԱԼ—Տուր ինձ այդ նամակը։ (Կարդում է։) «Ժան Մէնսֆիլդ, որ նախապէս նշանակուած էր զօրավար Բրնէտի շարժուն հիւանդանոցների մէջ ծառայելու, Մադօրում մեզանից բաժանուեց և անցաւ թշնամու կողմը, վերջիններիս ուղարկուած շարժուն հիւանդանոցի հետ։

Երևում է, որ այնտեղ նրա հայրենասիրական զգացմունքները ցնդել են, որովհետև ամէն օր գալթակղելից տեղեկութիւններով լիքը հեռագիրներ է ուղղում մեր երկրում պատերազմի դէմ գործող անամօթ կուսակցութեան...»

ՀԻԳԳԻՆՍ.—Խեղճ բարեկամս։

ԾՈՎԱԿԱԼ.—Անկարելի է. դա պարզապէս զրպարտութիւն է, և ես յոյս ունիմ, որ քո լրագիրը դրան արձագանք չի տայ։ Ժանը Մադօրում չէ։

ՀԻԳԳԻՆՍ.—Շարունակիր։

ԾՈՎԱԿԱԼ (Կարդալով).—«Վերջին ժամում հաւատացնում են, որ նա ընդունել է պատուոյ նախագահութիւնը մի ժողովի՝ որին մասնակցում են երկու հազար կանանցից աւելի և որ նպատակ ունի բողոքելու պատերազմի դէմ...»

ՀԻԳԳԻՆՍ (Խլելով նրա ձեռքից նամակը).—Աւելորդ է վերջացնել։

ԾՈՎԱԿԱԼ.—Ես խնդրում եմ այդ տեսակ վարմունք չվերագրել կնոջս... Եթէ այդպիսի բան գոյութիւն ունենար, Բրնէտն անմիջապէս ինձ իմաց կըտար։

ՀԻԳԳԻՆՍ.—Բրնէտն ինչ է իմանում Առանց այն էլ նա արդէն բաւական զբաղուած է թշնամուն հալածելով։ Բայց Ջոնսընը՝ որին ես եմ պատրաստել—և դրա համար հպարտ եմ—Ջոնսընը սուր հոտառութեամբ որոնում է պատերազմի շուրջը կատարուող բոլոր գաղտնի դաւերը։ Հասկացա՞ր։

ԾՈՎԱԿԱԼ.—Ի՞նչ էք ասում։ Քիչ ու շատ ճանաչում եմ կնոջս, գիտեմ թէ ինչ բան անել կարող է, մանաւանդ ինչ բան անել՝ անկարող։

ՀԻԳԳԻՆՍ.—Ես էլ նրան ճանաչում եմ։ Ինձ ծանօթ

են նրա ցնորամիտ, ներողութիւն, իդէալական գաղափարները, ինչպէս նաև նրա բուռն և անհեթեթ բնաւորութիւնը։ Ցիշում ես, նա գնաց գործադուլի առիթով դատապարտուած բանուորների համար չնորհ խնդրեց, և ստացաւ։

ԾՈՎԱԿԱԼ.—Ժանը մի ջերմեռանդ կին է, եթէ այդ ես ուզում ասել. հաւատացեալ՝ ինչպէս իր նախահայրերը, մաքրակրօնները, ինչպէս իր հայրը, բողոքական երէցը։ Բացի այդ, այդ ժողովը, այդ նախագահութիւնը իմ թշնամիների սարքած պատմութիւններն են։ Թշնամիս չատ։

ՀԻԳԳԻՆՍ.—Ձեմ հասկանում, ինչու՞ ես աշխատում արդարացնել կնոջդ, քանի որ նա քեզ նեղ դրութեան մէջ է դցում։

ԾՈՎԱԿԱԼ.—Ի՞նչ ուզում են ասեն։ Մինչև որ փաստերով չհաստատեն, ես այդ խօսքերին ոչ մի հաւատ չեմ ընծայի։

ՀԻԳԳԻՆՍ.—Համաձայն եմ քեզ հետ, որ երբ ջահել աղջիկ էր, տարօրինակ կերպով հրապուրիչ էր։ Ներշնչող բնաւորութեան տէր՝ և առանց դեռևս չափազանց ոգեորուող լինելու, արդէն փառասիրական ձգտումներ ունէր։ Դժբաղդաբար նրա այդ եզակի բնաւորութիւնն է որ քեզ դրաւեց։

ԾՈՎԱԿԱԼ.—Դու ինձ ձանձրացնում ես և ժամավաճառ անում։ (Թփում են դռան։) Մտէք։

ՄԷԼՎԻԼ.—Նաւակը մօտեցաւ։ Պատգամաւորը՝ դատելով նրա ձևից և ձայնից, կին է երևում։ Նա խօսում է անգլերէն, չատ մաքուր արտասանութեամբ։

ԾՈՎԱԿԱԼ.—Զարմանալի բան։

ՀԻԳԳԻՆՍ (Ինքն իրան).—Հը՛նդ։

ԾՈՎԱԿԱԼ (Մէլվիլի).—Ի՞նչ է ասում։

ՄԷԼՎԻԼ.—Ասում է, որ չատ կարևոր առաջարկութիւններ է բերում։

ԾՈՎԱԿԱԼ.—Իջեցրէք սանդուխը, թող բարձրանայ։

ՄԷԼՎԻԼ.—Սակայն նա պայմաններ է առաջարկում բարձրանալու համար։

ԾՈՎԱԿԱԼ.—Ի՞նչ պայմաններ։

ՄԷԼՎԻԼ.—Նախ՝ իր իրաւունքների կատարեալ յարգանք՝ որպէս պատգամաւորի։

ԾՈՎԱԿԱԼ.—Այդ չատ բնական է... երևում է որ անփորձ է... Ցետոյ։

ՄԷԼՎԻԼ.—Պահանջում է ձեզանից ազնիւ խօսք անարգել վերադառնալու՝ այն դէպքում, երբ մերժէք իր առաջարկութիւնները։

ԾՈՎԱԿԱԼ.—Այդ էլ մտնում է արդէն նախորդ պայմանի մէջ։ Համաձայն եմ։ Թող բարձրանայ։

ՄԷԼՎԻԼ.—Ի՞նչ պատասխան տամ նրան ձեր պատասխան խոստումի մասին։

ԾՈՎԱԿԱԼ.—Ոչինչ, աւելորդ է։

ՄԷԼՎԻԼ.—Իսկ, եթէ պահանջեց։

ԾՈՎԱԿԱԼ.—Այդ դէպքում ասացէք...որ թող դայ, ես ինքս ազնիւ խօսք եմ տալիս։ (Մէլվիլ գնում է։) Ի՞նչ դլխացաւ։ Ո՞վ է արդեօք այդ կինը. մի փախստական, թէ մեր լեզուն իմացող մի բնիկ։ Ի՞նչ է քո կարծիքը։

ՀԻԳԳԻՆՍ.—Ծովակալ Մէնսֆիլդ, երկրի յոյսը ձեր վրայ է։

ԾՈՎԱԿԱԼ.—Եթէ յաջողութիւնը կախուած է միմիայն իմ պարտականութեան կատարումից, յաղթութիւնը ապահով է։ (Թփում են։) Լաւ, մտէք։

(Մտնում է Մէլվիլ, մի կնոջ հետ։)

ՄԷԼՎԻԼ.—Ահա այն կինը, ծովակալ։

ԾՈՎԱԿԱԼ.—Ո՞վ որ էլ լինէք, տիկին, հաւատացած եղէք, որ մենք ձեզ այս նաւի վրայ ընդունեցինք, որքան դիւրութեան զգացումներից, նոյնքան պարտակատարութեան ձայնից դրդուած... Խօսեցէք, տիկին։ Բայց նախ և յառաջ բաց արէք ձեր դէմքը։ Համեցէք տիկին. և խնդրում եմ առանց այլևայլութեան. ժամանակն անցնում է, խօսեցէք։

ՕՏԱՐՈՒՀԻՆ (Վեղարաւոր մի սեւ, երկար վերարկու հագած).—Ես կը խօսեմ... միմիայն ձեր ներկայութեամբ ... պարոն... ինձ տրուած հրահանգները բացարձակ... ու չափազանց լուրջ են...

ՀԻԳԳԻՆՍ (Ինքն իրան).—Պրծաւ։

ԾՈՎԱԿԱԼ.—Լաւ, տիկին։ Պարոններ, մեզ մենակ թողէք։

ՄԷԼՎԻԼ.—Ծովակալ, թոյլ տուէք ձեզ մօտ մնամ... Այս կինը թշնամու կողմն է անցել... Վախեցէք մի նոր և աւելի համարձակ Շարլօտ Կօրդէից *)...

ՕՏԱՐՈՒՀԻՆ (Միայն Մէլվիլի յայտնուելով).—Երանի թէ նրա քաջութիւնն ունենայի, պարոն, բայց ես չեմ ցանկանում երբէք նրա օրինակին հետևել։

ԾՈՎԱԿԱԼ.—Դնացէք, պարոններ։ Մէլվիլ, ոչինչ վիսուած չէ մեր ծրագրի մէջ. ժամի ճիշդ հինգին։ (Դնում են։) Ի՞նչպէս, տէր Աստուած, դու ես։

*) Այն երիտասարդ աղջիկն է, որ, վրէժխնդրութիւնից մղուած՝ դաշունահարեց Ֆրանսիական Մեծ-Յեղափոխութեան երեք հռչակաւոր պարագլուխներից մէկին, անողոք՝ Մարային, երբ վերջինս լոգանում էր բաղնիսում։ Իսկ ինքն Շարլօտը, բռնուեց և գլխատուեց։

Ծ. Թ.

Հ.Ս.Խ.Հ. ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Հ.Հ. Публичная Библиотека
7/XI. 1922
Именная Масякиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՕՏԱՐՈՒՀԻ —Թող ինձ, ես այլ ես ինձ չեմ ծածկում։ Այո՛, ես եմ։

ԾՈՎԱԿԱԼ.—Ժան, այդ չտեսնուած, չլսուած բան է... Դա պարզապէս խենդութիւն է։

ԺԱՆ.—Երբէք քեզ այնքան չեմ սիրել, երբէք քո վրայ այնքան յոյս չեմ դրել, որքան այժմ։

ԾՈՎԱԿԱԼ.—Դէ խօսիր, խօսիր։ Այս ինչ խաբեբայութիւններ ես գործ դրել մինչև ինձ մօտ գալու համար, հնազանդուելով մի պարզ քահանայի։

ԺԱՆ.—Ես ոչ մի խաբեբայութիւն գործ չեմ դրել. ամեն ինչ օրինաւոր կերպով եմ կատարել։

ԾՈՎԱԿԱԼ.—Ո՛չ, այդ ճիշդ չէ՛, որովհետև դու ի չարը գործ դրիր պատգամաւորի անունը՝ հետևորդներ և այդ նաւակը ձեռք բերելու համար։ Ի՞նչու համար եկար։ Այդ ինչպէս եղաւ, որ ոչինչ չիմացայ... Ի՞նչ է նշանակում այս բոլորը։ Ո՞րտեղ է տեսնուած այս տեսակ յանդուգն քայլ։

ԺԱՆ.—Որովհետև ոչ ոք չէ արել այն՝ ինչ ես արեցի։ Դու գիտես, որ ես ուրիշի նմանուել չեմ սիրում։ Ցանկանում էի քեզ տեսնել։

ԾՈՎԱԿԱԼ.—Բայց թշուառ կին. միթէ չես իմանում, որ ինձ էլ մեղսակից ես դարձնում։ Անհեթեթ վարմունքդ ամենքի բերանը պիտի ընկնի. մինիստրը կարող է ինձ պատժի ենթարկել. դու կորցնում ես ոչ միայն քո բարի համբաւը, այլ և կործանում ես իմ ապագան։

ԺԱՆ.—Չէ՛ կ, իմ Չէ՛կ. ես չեմ ուզում ինձ արդարացնել։ Այն նպատակը որ ինձ դրդեց գալ այստեղ, աւելի թանգ արժէ, քան թէ իմ կեանքը։ Ես պէտք է որ անպատճառ քեզ տեսնէի։

ԾՈՎԱԿԱԼ.—Եւ դու այդ անլուր ու անխորհուրդ

քալն արեցիր, թողեցիր մինչև անգամ հիւանդապահ-պաշտօնդ, դու այդ բոլորը կատարեցիր սիրոյ մի պարզ քմահաճոյքի համար. ահ, դու դիժ։

ԺԱՆ.—Քո սէրը միայն ինձ վստահութիւն ներշնչեց։

ԾՈՎԱԿԱԼ.—Իսկապէս քո արածը անմիտ, բայց, այնուամենայնիւ, խիզախ քայլ է... Երևի հէնց լսեցիր, բանակում, որ ես մօտեցել եմ, մի անդիմադրելի զօրութիւնից մղուած՝ նաև նստեցիր ու եկար. այնպէս չէ։

ԺԱՆ.—Այո։

ԾՈՎԱԿԱԼ.—Ասա, դուցէ ինձ հաղորդելու մի մեծ լուր ունէիր, դուցէ մի թանկագին լոյս, որ ինձնից ծածկում ես... Ա՛յնքան քաղցր էր այն վերջին շաբաթը, որ անցկացրինք միասին, պատերազմի գնալու հրամանն ստանալուց առաջ։

ԺԱՆ.—Յետոյ, յետոյ կը խօսինք այդ մասին։

ԾՈՎԱԿԱԼ.—Ա՛հ, սիրելի խենդուկս, իսկ ես դեռ ևս քիչ առաջ քեզ մի նամակ ուղարկեցի հիւանդանոցի հասցէով... Իմ երկրորդ մտածումը դէպի քեզ թռաւ։

ԺԱՆ.—Իրա՞ւ։ Շնորհակալ եմ... Իսկ առաջինը։

ԾՈՎԱԿԱԼ.—Ի՞նչ ասել կուզէ, որ դէպի հայրենիքս... Ուրեմն այսպէս, իմ վայրենի արծուիկս, դու պիտի տեսնես պատերազմը, ահեղ պատերազմը։

ԺԱՆ.—Ի՞նչ, մթթէ նա վճռուած է։

ԾՈՎԱԿԱԼ.—Համարեա սկսուած է. և հէնց դրա համար է, որ պարսաւում եմ քո յանդգնութիւնը։

ԺԱՆ.—Ե՞րբ է սկսում կռիւը։

ԾՈՎԱԿԱԼ.—Գրեթէ մի ժամից յետոյ. նշանը տալիս եմ արդէն նաւատորսին։

ԺԱՆ.—Բայց ինչու համար կռուել։

ԾՈՎԱԿԱԼ.—Մինիստրը գործողութեան կատարեալ ազատութիւն է տալիս ինձ և ես յարձակման մի այնպիսի ծրագիր եմ կազմել, որի յաջողութիւնից կախուած կը լինի գուցէ ամբողջ պատերազմի բաղդը։

ԺԱՆ.—Եւ դու ես յղացել այդ ծրագիրը... Ի՞նչ է տեսնենք։

ԾՈՎԱԿԱԼ.—Ի՛նչպէս բանիմացն ես ձևանում։ Շատ պարզ է. քաղաքը ռմբակոծում եմ արշալուսին՝ յանկարծակի. մի ժամից յետոյ, երբ թշնամին սարսափի մէջ է ընկած արդէն, Բրնէտ նրան կը վերցնէ հակառակ կողմից։ Շատ յաջող գործ է լինելու։ Ինձ պակասում էր միայն ողևորութիւնը. ահա և նա. դու էլ բաժին ես ունենալու կռուում։

ԺԱՆ.—Որքան մեծ պատիւ ինձ համար։

ԾՈՎԱԿԱԼ.—Քանի որ այստեղ ես, սիրելիս, ես ցանկանում եմ վերակենդանացնել աւանդական գեղեցիկ ժամանակները։ Քեզ ասում եմ, որ դու կը տեսնես պատերազմը, կը տեսնես նրան՝ կամրջակի վրայից, կանգնած իմ կողքին. առաջին անգամ մենք կը հաղորդուենք կրակի մէջ. խենթ, բայց գեղեցիկ բան կը լինի։ Կենդանի յաղթանակը մեր նաւի վրայ է։

ԺԱՆ (Մենակ, բեմի առաջամասում).—Աստուած իմ, Աստուած իմ... Քաջութիւն տուր ինձ։ Մի տղամարդ դուցէ ընկրկէր այս գործի առաջ. առնուազն հարկաւոր էր լինել մի հերոսուհի... Իսկ ես, այժմ, աւելի քան երբէ՛ք զգում եմ, որ կին եմ...մի տկար կին... Եւ, սիրում եմ նրան։

ԾՈՎԱԿԱԼ (Պարզելով կարմիր եւ կապոյտ մետաքսեայ մի դրօշակ).—Տես, ահա մի պատուոյ դրօշակ, որ իրանց ձեռքով ասեղնագործել են ինձ համար մեր նաւատորմի

սպանների կանայք։ Այսօր մենք նրան կը մկրտենք։

ԺԱՆ (Երազելով).—Ինչու համար աշխարհի բոլոր դրօշակների վրայ կարմիր կայ։

(Խփում են դռան։)

ԾՈՎԱԿԱԼ.—Մտէ՛ք։

ՄԷԼՎԻԼ.—Այդ մարդիկը առանց այս կնոջ չեն ուզում վերադառնալ։

ԾՈՎԱԿԱԼ.—Ի՞նչպէս։

ՍԷԼՎԻԼ.—Ծովակալ, մի՞թէ չգիտէք, թէ ո՞վ էր այդ նաւակով եկող կինը։

ԾՈՎԱԿԱԼ.—Այո՛, գիտեմ։ Թողէք մեզ։ (Մէլվիլ գնում է։) Այս մարդու մօտ չուզեցի քեզ յանդիմանել։ Բայց, ի սէր Աստուծոյ, Ժան, պարզիր ինձ այս հանելուկը։

ԺԱՆ.—Դու չգիտես իմ ճանապարհորդութեան պարագաները։ Ես ծովեզերքի կալանից չեմ գալիս... Չգիտես մանաւանդ իմ գալու նպատակը։ Ես չեմ եկել բնա՛ւ քեզ հետ կռուի ընկեր լինելու, և ոչ էլ պատերազմի թագուհի դառնալու համար... Ես եկել եմ բողոքելու պատերազմի դէմ և փրկելու մեր երկիրը մի անլիրաւ յաղթութեան նախանշանքից։

ԾՈՎԱԿԱԼ.—Ուրեմն դու գալիս ես Մագօրից։ Եւ այս բանակցութիւնը հնարուած բան չէր։ Կինս թշնամու կողմն է անցել։

ԺԱՆ.—Ես անցել եմ մարդկութեան կողմը։

ԾՈՎԱԿԱԼ.—Ա՛հ, թշուառակա՛ն, թշուառակա՛ն։

ԺԱՆ.—Ես առաջարկեցի, որ մի հիւանդանոց ուղարկուի Մագօր։ Ես ուզեցի գնել ձեր յանցանքը։ Ես կապեցի վէրքերը նրանց՝ որոնց պատառել էին ձեր գնդակները։ Ես չօշափեցի նրանց արիւնի կաթիլ-

ները, ինչպէս չօշափում են աղնիւ քարերը։ Հէնց որ ճանաչեցի թշնամուն, սիրեցի նրան։ Երբ լսեցի քո գալը, եկայ քեզ մօտ արդարութիւն աղաղակելու համար։

ԾՈՎԱԿԱԼ.—Ուրեմն դու գալիս ես թշնամու կողմից։

ԺԱՆ.—Ո՛չ, ես գալիս եմ մեր երկրի յաղթուած, բայց լաւագոյն կուսակցութեան կողմից, յանուն այն փոքրամասնութեան, որ այս պատերազմի խենթութեան մէջ ներկայացնում է մեր ցեղի գիտակցութիւնը։

ԾՈՎԱԿԱԼ.—Ա՛հ, դու մեզ կորուստի մատնեցիր։ Այսպէս, այդ անամօթ պրոպագանդը... Ուրեմն Հիզգինսը ճիշտ էր ասում։

ԺԱՆ.—Այո՛, առաջին անգամ իր կեանքում։ (Հանում է գրպանից մի տպուած թուղթ։)

ԾՈՎԱԿԱԼ.—Ժա՛ն, եթէ պաշտօնիս պատասխանատուութիւնը չլինէր, ես, անկասկած, իմ ուղեղը պայթեցրած կը լինէի։

ԺԱՆ.—Խնայիր կեանքիդ։ Իմ Ջէկ. մի մեծ դատ պէտք պիտի ունենայ նրան։ Ահա բողոքողների անունները. նրանք դիմել են երկրի ամէն կողմից։ Կենտրոնական մասնախմբի անդամներն անդամ ստորագրել են այս ուղերձի տակ և նրանք անձամբ ուղարկել են ինձ։

ԾՈՎԱԿԱԼ.—Լռի՛ր, թո՛ղ ինձ։ Դու գժուել ես։ Եւ ասել, թէ սա իմ կինն է։

ԺԱՆ.—Նախ կարդա՛, յետոյ կը դատես ինձ։

ԾՈՎԱԿԱԼ.—Ի՞նչպէս։ Ի՞նչ է այդ դիմումի նպատակը։

ԺԱՆ.—Ազդեցիկ և չիտակ մարդկանց հաւանու-

թիւնը ձեռք բերել, խնայելու համար մեր երկրին մի այդ աստիճան անպատիւ պատերազմ։ Դու այդ մարդկանցից մէկն ես։

ԾՈՎԱԿԱԼ.—Դուք պարզապէս ապստամբո՛ւմ էք մեր հայրենիքի դէմ։

ԺԱՆ.—Արդարութիւնը հայրենիք չունի։

ԾՈՎԱԿԱԼ.—Իսկ ես ունեմ մի հայրենիք և այդ անձերը սխալւում են ծովակալ Մէնսֆիլդի դիմելով։

ԺԱՆ.—Ի՞նչ փոյթ, եթէ յօժարութիւն յայտնեցի նրանց իրձերը քեզ բերելու։ Այո, նրանք քեզ են դիմում, քեզ՝ մաքուր խիղճ, որին պարտականութեան անունով ոճիրի մէջ պիտի թաթախեն։

ԾՈՎԱԿԱԼ.—Եւ դու ուզում ես ինձ հաւատացնել, որ այդ մարդիկը ընդունեցին այդ չիմար ու դաւաճան առաջարկը, և ընդունեցին քո միջոցով՝ Ժան Մէնսֆիլդի, ծովակալ Մէնսֆիլդի կնոջ միջոցով։

ԺԱՆ.—Այո, նրանք ինձ ընտրեցին պատգամաւոր, ինձ այս ժողովրդի կանանց ամենայետինին, ամենատկարին, որը սակայն այս բոպէիս զգում է իր հոգու մէջ խաղաղութեան ամբողջ փառքը։

ԾՈՎԱԿԱԼ.—Ինչ որ էլ լինեն իմ անձնական ըզգացումներս պատերազմի մասին, ես այստեղ ծովակալ Մէնսֆիլդ եմ և մի պարտականութիւն միայն ունիմ—կատարել ինձ տրուած հրամանը։

ԺԱՆ.—Ո՞վ տուաւ քեզ այդ հրամանը. մի ստախօս կառավարութիւն։ Քո բոլոր տեղեկութիւնները նրանից են, դու անդիտանում ես մաքերի նոր ուղղութիւնը, հասարակական կարծիքի փոփոխումը։

ԾՈՎԱԿԱԼ.—Ես պէտք չունեմ ուշք դարձնելու քաղաքական փոփոխութիւններին։

ԺԱՆ.—Ի զուր, որովհետև լեռոյ կը տուժես։ Երբ մեր խաղաղասէր կուսակցութիւնը իշխանութեան գլուխ անցնի, դու դատապարտուած պիտի լինես մղելու մի այնպիսի պատերազմ, որն ամենքը պիտի անիծեն. արդէն թափուած մի քանի կաթիլ արիւնի փոխարէն, պարտաւոր պիտի լինես հեղեղներ հոսեցնելու։

ԾՈՎԱԿԱԼ.—Ես մի բան եմ միայն ճանաչում—այն է ինձ տրուած վերջին հրահանգները։

ԺԱՆ.—Այդ մարդիկը, անկասկած, ոնանկացողների նման պիտի խաղան մինչև վերջը. ինչ փոյթ նրանց թէ երկիրը թաւալւում է կործանման մէջ։

ԾՈՎԱԿԱԼ.—Եթէ նոյնիսկ այդպէս լինի, ես ինչով եմ պատասխանատու։ Փառք Աստուծոյ, ես միայն մի գործիք եմ։

ԺԱՆ.—Այո, ոճրի մի գործիք՝ նրանց ձեռքում։ Նրանք չահագործում են քո հլու հաճոյակատարութիւնը։ Նրանք իրանց յոյսը դրել են քո յաղթանակի վրայ, իշխանութեան կառչելու համար։ Նրանք ուզում են, որ ամեն ինչ անդառնալի լինի։ Նրանց նամակն անգամ մի խոստովանութիւն է այդ մասին. «Հարկա որ է անմիջական գործողութիւն։» (Հանում է կրկնոցի գրպանից մի ծրար լրագիր։) Կարդա, կարդա ճչմարտախօս լրագիրները, հեռատես և ուղղամիտ լրագիրները... Մտիկ տա՛ր գոնէ այս յօդուածի վերնագրին. «Պատերազմի առաջը կառնենք, եթէ ծովակալ Մէնսֆիլդ յարձակում չգործէ...»

ԾՈՎԱԿԱԼ.—Թող ի սէր Աստուծոյ։ Բոլոր լրագիրներն էլ միևնոյն թանաքով են կեղտոտուած։

ԺԱՆ.—Կարդա գոնէ այս ուղերձը. այստեղ հրապարակախօսները չէ որ ստորագրել են, այլ մեր ժողովրդի առաջնակարգ մարդիկ։ (Մինչ ծովակալը կար-

դում է։) Տեսնում ես. ես մի ցնորուած չեմ... Հայրենասիրական ճռճռան խօսքերով նրանք խաբել են երկրի բարեմտութիւնը. ամբոխի կողմից անպատուուած մեր դրօշակի համար վրէժ լուծելը՝ մի ողորմելի պատրուակ է։ Այս պատերազմը պարզապէս շահադիտական մի ձեռնարկութիւն է. սա ոսկու նուաճումն է արիւնի գնով։ Շահադիտութեան Նապոլէոնները ուզում են իրանց ձեռքում մի զժոխալին գործիք դարձնել այս ժողովրդի զաւակներին, բանակի պետերին, քեզ՝ առանց քո գիտութեան, քեզ՝ քրիստոնեայ ու արդար մարդուդ։

ԾՈՎԱԿԱԼ.—Հարդֆօրդն ստորագրել է։

ԺԱՆ.—Այո, Հարդֆօրդը, մեր մեծագոյն իրաւագէտը ստորագրել է։ Նա ինքն անձամբ փութացել է մասնախմբի մօտ, ստորագրելու համար։

ԾՈՎԱԿԱԼ.—Շերբանկն էլ է ստորագրել։ Բայց նա կառավարութեան հակառակ չէ։

ԺԱՆ.- Մեր երկրի բարիքը ցանկացող բոլոր մարդիկ, որ կուսակցութեան էլ պատկանելիս լինեն, պատերազմի դէմ են։

ԾՈՎԱԿԱԼ.—Ի՞նչ, ծերունի Նորբանն էլ։

ԺԱՆ. Այո, նա էլ, մեր նահապետն էլ է ստորագրել. գիտես որ նա անդամալոյծ է. դրա համար էլ մի պատգամաւորութիւն մասնաւորապէս գնացել էր նրա մօտ։ Երբ նա ստորագրում էր անունը իր մեղրամոմեայ երկար ձեռքով՝ կարծես մեր ցեղի անցեալն էր, որ իր գերեզմանի եզերքից դառնալով դէպի մեզ պատուում. էր արդար եղբէք։

ԾՈՎԱԿԱԼ —Ժան, ես չեմ կարող լսել այդ պատճառաբանութիւնները։

ԺԱՆ.—Մի վախենայ, հայրենիքդ վտանգի չենթարկի. նա է նախայարձակը, նա է ուժեղը։

ԾՈՎԱԿԱԼ.—Պատերազմը յայտարարուած է։

ԺԱՆ.—Նա դեռ ես չէ սկսուած։

ԾՈՎԱԿԱԼ.—Մեր թնդանօթներն արշալուսին ենմիայն սպասում։

ԺԱՆ.—Մի խօսք՝ քո կողմից, և նրանք կը լռեն։

ԾՈՎԱԿԱԼ.—Ի՞նչու եկար այստեղ։ Դու չպիտի կարողանաս փոխել ոչ մէկն իմ գործողութիւններից, բայց ինձ բերած պիտի լինես խղճի մի մեծ խայթ...

ԺԱՆ.—Ես եկայ քեզ բերելու պատերազմի տագնապը. բայց մեկնելուց առաջ, եթէ կը կամենաս, քեզ կը թողնեմ խաղաղութեան հրճուանքը։

ԾՈՎԱԿԱԼ. - Ո՛չ, դու ինձ կը թողնես քո մանկական հոգու, քո հերոսական հոգու լոյսը, սիրելիս, բայց այդ լոյսը սնոտի է և խաբուսիկ։

ԺԱՆ —Մեր սէրը հիմնուած է աշխարհի համար մի սեծ բարիքի այդ լոյսի վրայ. եթէ մեր երկուսի մէջ արիւն դոյութիւն ունենար, ես այլ ես քեզ չէի պատկանի երբէք։

ԾՈՎԱԿԱԼ.—Ժան, իմ Ժան։ Դու ինձ չարաչար տանջում ես։ (Նայում է խրօնոմէտրին։) Կէս ժամ, հազիւ կէս ժամ է մնացել։

ԺԱՆ.—Այո, կէս ժամ է մնում ամեն ինչ փոքրկելու համար։ Ուղարկիր Բրնէտին մը հեռագիր։ Ցիշում ես, առաջին համբոյրներդ տալիս, ասացիր, որ իմ աչքերում տեսնում էիր ապագայ գործեր. իրականացնենք նրանց այսօր։

ԾՈՎԱԿԱԼ.—Էլ չեմ կարող, հաւատացնում ես։ Քո պաշտելի ձեռքերը պատառում են իմ սիրտը։

ԺԱՆ.—Լաւ ուրեմն. ես այլ ես չեմ խնդրի քեզա—

նից մեզ համար, յանուն մեր նուիրական սիրոյ, որը վտանգի մէջ է. չէ՞ որ այդ համարեա ստորութիւն էր։ Այո՛, ես կը դադարեմ հայցել քո դուքը նոյնիսկ մեր անմիտ հայրենիքի համար... Այլ պաղատում եմ քեզ յանուն մարդկութեան, յանուն այն բոլոր ջանքերի, որոնց շնորհիւ նա առաջ է գնում. ես դիմում եմ քեզ, կոչումն եմ անում քո անձնական խղճին։

ԾՈՎԱԿԱԼ.—Լա՛ռ, այժմ ես միայն մի խիղճ չունեմ։

ԺԱՆ.—Ընդհակառակը։ Ամենախոր անդունդից մի ձայն միայն դուրս է գալիս։ Ներդաշնակիր քո խիղճը աշխարհի խղճի հետ, որ զարթնում է. Լսիր հոգիների դէպ՝ խաղաղութիւն թռչող մեծ հառաչանքը, մարդկային ցաւատանջ ցեղի այն ողբը, որ հեծեծում է իմ սրտում աւելի բարձրաձայն, քան մի բոպէ առաջ իմ գլխի վրայ մռնչող ծովերի քամին։ Եւ եթէ ներկայ վկայութիւնները քեզ չբաւեն, թող ես ինքս կենդանի ապացոյցը լինեմ երկրի այս ամբողջ տանջանքին. ես՝ որին դու խորապէս յարգում էիր սիրոյ մէջ, ես՝ որ բովանդակ էութեանդ ծնկաչոք մեծարանքն ընդունեցի, այժմ ես ինքս ծնկի եմ գալիս քո առաջ։

(Հարուրում է Մէնսֆիլդի ծնկները։)

ԾՈՎԱԿԱԼ.—Ժա՛ն, Ժա՛ն։ Դու երկնային մի հրեշտակ ես, որ եկել է փորձութեան մէջ զցել մի մարդու։

ԺԱՆ.—Թո՛ղ ինձ, թո՛ղ ինձ... Մի վերջին անգամ էլ պաղատում եմ քեզ։ Խորհիր, որ հրեշային վէրքերը պիտի բազմապատկուեն մարդկային մարմինների մէջ, որ շուտով այս նաւի տախտակամածը պիտի ծածկուի անհաշիւ վիրաւորներով, որ մարդիկ՝ որոնք

Երբէք իրար չեն տեսել, միմեանց պիտի կոտորեն ատելութեամբ բորբոքուած, որ այդ զարհուրելի կարմիր տեսիլքը պիտի պարզուի հեռուն, հոգիների մէջ, որ այն՝ ինչ տակաւին չէ կատարուած՝ պիտի կատարուի երկնքի տակ և պիտի պղծէ կեանքը իր արհաւիրքով... Չէ՛կ, Չէ՛կ, յանուն այն մատաղահաս աղջիկների և քոյրերի, յանուն այն մայրերի և ինձ նման ամուսիններու, որոնք պիտի անիծեն քո գործը, յանուն այն շուարած ջահիլ տղամարդկանց, որ մեռնելիս պիտի ուրանան կեանքը, յանուն Աստուծոյ, որ մարդացաւ, յանուն մարդկութեան, յանուն մարդկութեան պաղատում եմ քեզ...

ԾՈՎԱԿԱԼ.—Ինձ թւում է, որ կանգնած եմ Աստուծոյ դերադոյն դատաստանի առաջ... (Խփում են դռան։) Վա՛ր կաց, վա՛ր կաց։

(Ծովակալը գնում է բանալու։)

ՄԷԼՎԻԼ (Շէ՛մբին).—Ներողութիւն, ծովակալ։ Սաքսոնի հրամանատարը հարցնում է թէ ինքը պէտք է առանձին ռմբակոծէ թէ միւս նաւերի հետ միահամուռ։

ԾՈՎԱԿԱԼ.—Զգիտեմ... Սպասեցէ՛ք։ Կամ թէ ո՛չ, ասացէ՛ք, որ յարձակումը յետաձգուած է կէս ժամով։ Գնացէ՛ք։

(Մէլվիլ մեկնում է։)

ԺԱՆ.—Ո՛չ թէ կէս ժամով, Չէ՛կ, այլ գոնէ մի օրով, մի շաբաթով. և խաղաղութիւնը, որ ուզում էին այս ջրերի մէջ ընկղմել, դուրս պիտի ժայթքէ յաղթական։

ԾՈՎԱԿԱԼ (Ինքնիրան).—Արդեօք Բրնէտին մի հակառակ հրաման ուղարկեմ... (Ժանի) Բայց ո՛չ, ո՛չ,

չեմ կարող համաձայնուել։ Խանդավառութիւնը քեզ կուրացրել է, զաւակս... Այս ճարպիկ փաստաթղթերով դու կարող եղար նոյնիսկ ինձ վրդովել մի բոպէ... Բայց խելքի եկ։ Մտածիր թէ որտեղ ենք և ով եմ ես։ Հրամայել՝ որ Բրնէտ յարձակումը յետաձգէ, այդ անկարելի է, անկարելի է։

ԺԱՆ.—Այն տենդը, որ ես զգում եմ, կամենում եմ, որ ինձ այրէ մինչև վերջը։ Ես շատ առաջ գնացի, և էլ չեմ կարող յետ դառնալ։ Մեր երկուսի մէջ մի ինչ որ մահացու բան կայ։ Չէկ, մեր սէրը մեզ պիտի ապրեցնէ կամ սպանէ։ Դու քո Ժանին չես ճանաչում ամբողջապէս. դու չգիտես իմ վերջին ասելիքը։ Քո ամբողջ հասարակական կեանքը մի սխալ է։ բովանդակ տիեզերքը կքել է ոճրի օրէնքի տակ։ Մի սարսափելի ջանք է հարկաւոր քեզ նրա ճանկերից ազատելու համար, վերականգնելու համար աշխարհը քեզ հետ միասին։ Բարեկամս, ես եկել եմ քեզնից խլելու ոչ թէ մի պատերազմի յետաձգումը, այլ աւելին՝ ես եկել եմ իսկապէս քեզնից խլելու անկարելին, իրագործելի անկարելին։

ԾՈՎԱԿԱԼ.—Ի՞նչ ես ուզում ուրեմն ինձանից։

ԺԱՆ.—Ուրացիր քո արհեստը, հրաժարուիր ամեն պատերազմից։ Քո կալմերի վրայ բարձրացրու սպիտակ դրօշակը և յետ դարձրու ժողովրդին քո սուրը դեռ նաարիւնով չարատաւորուած։ (Գետին է շպրտում պատուոյ դրօշակը։ Ծովակալը մի ճիչ է արձակում։)

ԾՈՎԱԿԱԼ.—Բայց դա մեր երկիրը թշնամուն մատնել է, զաւակս, իսկ ինձ համար՝ մահ։

ԺԱՆ.—Ո՛վ իմ Չէկ. քանի որ մարտիրոսութիւնը

միայն և միշտ նուաճել է ապագան, ուրեմն մարտիրոսների ցեղը երբէք չէ հանդչելու։ Եղիր աշխարհի հերոսը, եղիր իմ հերոսը և ես կը հետևեմ քեզ, կամ աւելի շուտ, ոչ, քայլենք միասին, կողք կողքի, որպէսզի մեր սէրը՝ լինի մի և անբաժան մինչև վերջը—որովհետև իմացիր, որ հրաշալիքներ կան մեր սիրոյ խորքում. թող նա՝ մեր սէրը՝ իր վրայ կրէ, որպէս կենդանի զարդարանք, մեր եղբայրների սէրը, և ինչպէս մի յաղթական ծիրանի, ապագայի երախտապիտութիւնը, թող նա լինի կատարեալ և փառահեղ մինչև մահը և մահից էլ յետոյ... (Դեան խփում են։)

(Միջոց)

ԾՈՎԱԿԱԼ.—Մէջք։

ՄԷԼՎԻԼ.—Ծովակալ, նաւի ծառայողները հաւաքուած են տախտակամածի վրայ աղօթելու համար։

ԾՈՎԱԿԱԼ.—Լաւ, գալիս եմ։ (Վերցնում է Աստուածաշունչը եւ զանդաղ դուրս գնում։)

ԺԱՆ (Կանգնեցնելով Մէլվիլին).—Պէտք է աղօթեն։ Ինչո՞ւ համար։

ՄԷԼՎԻԼ.—Բայց, տիկին, նաւի վրայ դա մի սովորութիւն է, ամեն պատերազմից առաջ։

(Մեկնում է։)

ԺԱՆ (Մենակ).—Ուրեմն այսպէս, գարշելի ոճիրը կատարւում է... Օ՜հ, այն մահագուշակ լռութիւնը, որ պիտի պայթի հեծեծանքների վրայ, երբ մահը խոյանայ դէպի ծովեզերք... Եւ մինչև անգամ զոհաբերելով իմ ամբողջ էութիւնը, ոչինչ չկարողանալ անել... Չկարողանալ գոնէ մի վայրկեան յետաձգել այդ սլաքը... (Նայում է խրոնոմետրին։) որ սողում է, սո՛ղում դէպի աղէտքի կատարումը... Լինել այստեղ, այս հսկայական ռումբի սրտում

և չկարողանալ այս ձեռքերով, այս երկու գալարուած ձեռքերով խեղդել նրա պալթիւնը, սրբապիղծ պատրոյզը... այսպէս... այսպէս... այսպէս... եւ սակայն ինչու չէ... այո, ես կարող եմ դեռ ես մի բան անել... կարող եմ նոյնիսկ շատ բան անել... ես ինքս կըտամ օրինակը... ես կը վազեմ դէպի մահ... Օ՛հ, աղատագրուենք։ (Ցատում եւ գրում է. մի բոպէից յետոյ Հիգգինս սողոսկում է խուցի մէջ։) Ո՞վ է ինձ լրտեսում։

ՀԻԳԳԻՆՍ.—Ո՛չ ոք, տիկին... ես եմ. եկել եմ ձեզ ներկայացնելու իմ խորին յարգանքները։

ԺԱՆ.—Ա՛հ, աւելորդ է պարոն. ինձ թւում է որ իմ երեսին նետում էք մի բուռը կեղտ....

ՀԻԳԳԻՆՍ.—Ինչպէս երևում է դուք կարդացել էք իմ լրագիրը։

ԺԱՆ.—Այո, ես նրան մի բոպէ թերթեցի ձեռքիս ձեռնոցներ անցրած... Աւելի լաւ էր նրան տալել տալիք ամբողջապէս կարմիր։

ՀԻԳԳԻՆՍ.—Այդ լաւ միտք է. անշուշտ վիրաւորուածների արիւնով, այնպէս չէ... Քանի որ դուք իմ լրագրի ընթերցողներից մէկն էք, չնորհ արէք նրան մի գաղտնիք վստահելու։ Ի՞նչի վերագրել նաւատորմին արած ձեր այս ալցելութեան պատիւը։

ԺԱՆ.—Հանեցէք ձեր լուշատետրը, և գրեցէք։ Եկել էի Մէնսֆիլդին իր պարտականութիւնից հեռացնելու համար, արդելելու համար, որ պատերազմի։ Պէտք է կարծել, որ ջանքերս ի դերև ելան։

ՀԻԳԳԻՆՍ.—Ի՞նչպէս, ձեր բոլոր ջանքերը ապարդիւն անցան։ Պաղատանք, ողբ և դուցէ ուրիշ բան...

ԺԱՆ.—Պարոն, ձեր արած ակնարկը արժանի է ձեզ...

Սակայն, երբ մտածում եմ Մէնսֆիլդի մասին, խորապէս խղճում եմ նրան...

ՀԻԳԳԻՆՍ.—Այդ հասկանալի է...

ԺԱՆ.—Ճշմարտութիւնն անկարող եղաւ համոզելու մի ազնիւ մարդու։

ՀԻԳԳԻՆՍ.—Իսկ պատերազմի խառնաշփոթութիւնը չեմ կարծում որ ձեզ մխիթարութիւն պատճառէ։

ԺԱՆ.—Ես պատերազմը չեմ տեսնելու, անհոգ եղէք, ես վերադառնում եմ։

ՀԻԳԳԻՆՍ.—Ո՞ւր էք գնում։

ԺԱՆ.—Շատ ճարպիկ էք լուրեր որսալու մէջ.—ես վերադառնում եմ Սպիտակ-Ամրոց։

ՀԻԳԳԻՆՍ.—Բայց մենք՝ ամենից աւելի այդ ամրոցն է որ պիտի ռմբակոծենք։

ԺԱՆ.—Ապա ուրեմն ամենից աւելի այնտեղ պիտի գտնուեն տանջուածները։

ՀԻԳԳԻՆՍ.—Հիանալի է։ Դուք ուզում էք ծովակալին գնել մի այսպիսի երկսայրի դրութեան մէջ. կամ հրաժարուել Սպիտակ-Ամրոցը ռմբակոծելուց, և կամ ձեզ ռմբակոծել... Շատ ազնիւ վարմունք է։

ԺԱՆ.—Ձեր հաշիւները ուրիշին մի վերագրէք, պարոն թղթակից։ Ես Մէնսֆիլդին չեմ ասելու, որ գընում եմ Սպիտակ- Ամրոց։

ՀԻԳԳԻՆՍ.—Նոյն բանն է։ Նա կը տեսնէ ձեր այնտեղ գնալը։

ԺԱՆ.—Հանգիստ եղէք, պարոն, Ջէկը պարտաճանաչ մարդ է, նա կը կատարէ իր պարտքը։

ՀԻԳԳԻՆՍ.—Ջէկը անցեալի մի հնացած ուրուական է, որ կարող է աղօթելու մէջ մրցել թշնամու հետ։ Ջէկը հաւատարիմ մարդ չէ։

ԺԱՆ.—Բայց գոնէ սրտի տէր մարդ է։

ՀԻԳԳԻՆՍ.— Է՛հ, էհ, դուք ինձ էք գովում։ Մենք՝ անգլօ-սաքսոններս պէտք է որ գրաւէինք ամբողջ երկրագունդը։ Տասը տարուց յետոյ, այնտեղ, այդ ծովափի վրայ, որ այսօր ամայի է, երևան պիտի գան ծառաստաններով շրջապատուած հարուստ կալուածներ, այգիներ, ծառից ծառ ձգուած ճօճանակներ, մէջը դեղեցիկ տիկիններով։ Դուք ինքներդ էլ, տիկին, եթէ կամենաք։

ԺԱՆ.—Այո, գուցէ մի քանի կիներ, բայց անգլօ-սաքսօն կինը, ապագայ թագաւորների մայրը՝ հպարտ, գիտակից, մեծ...

ՀԻԳԳԻՆՍ.—Սիրելի տիկին, ես ճանաչում եմ միայն կիներ, և դուք կը տեսնէք, թէ ինչպէս նրանք՝ պատերազմից յետոյ, կը թռչկոտեն դէպի հուսարների շրթունքը...

ԺԱՆ.—Պարոն, գոնէ խղճացէք ձեզ, և կարճ կապեցէք... Եթէ նոյն իսկ իմ ամուսնու չար ոգին լինէիք, ձեզ ատելու պատիւն անգամ չէի անի ձեզ։

ՀԻԳԳԻՆՍ.—Ներողութիւն. մի վերջին խօսք էլ։ թոյլ տուէք ձեզ մի բան ցոյց տալ... Քիչ առաջ դուք խօսեցիք ապագայի զաւակների մասին. այս բոպէիս նրանք իսկապէս որ իրանց ժամանակի պառաղներն են... (Գրպանից հանում է մի լրագիր։) Նայեցէք այս փոքրիկ մարդուկին. նա տասնևչորս տարեկան է և հազիւ մի թիզ բարձրութիւն ունի, բայց անցեալ օր թշնամու գիրքերի խուզարկութեան ժամանակ չորս հոգու ըսպանեց իր այս փոքրիկ թաթիկներով։

ԺԱՆ (Վեր թռչելով).—Ա՛հ, ափսոս որ չեմ կարող պատռել ձեր դիմակը. նա պինդ կպել է ձեր դէմքին։

Բայց գոնէ մի անգամ պէտք է որ ձեզ ասեմ. դուք մի թշուառական էք։ Կորէք այստեղից։

(Հիգգինս կամացուկ անյայտանում է. Ժան աւարտում է նամակը։)

ԾՈՎԱԿԱԼԻ ՁԱՅՆԸ

Հալածում եմ թշնամիներիս, հասնում եմ նրանց,
Եւ չեմ վերադառնում, մինչև որ բոլորովին չեմ ոչնչացնում.
Ջախջախում եմ նրանց, նրանք չեն կարողանում վերականգնել,
Ընկնում են իմ ոտքերի տակ։
Տէր, զօրութեամբ զօտեպնդում ես ինձ պատերազմի համար,
Կքում ես իմ տակ իմ թշնամիներին։

ՆԱԻԱՍՏԻՆԵՐԻ ՁԱՅՆԸ

Կքում ես իմ տակ իմ թշնամիներին...

ԺԱՆ.—Անծէք, անծէք։

ԾՈՎԱԿԱԼԻ ՁԱՅՆԸ

Դու փախուստի ես մատնում իմ թշնամիներին։
Եւ ես բնաջինջ եմ անում ինձ բոլոր ատողներին.
Նրանք աղաղակում են և ոչ ոք օգնութեան չէ հասնում։
Աղաղակում են դէպի Յաւիտենականը և նա չէ պատասխանում։
Ես նրանց փշրում եմ, ինչպէս փոշին քամու տակ։
Ես նրանց կոխոտում եմ, ինչպէս ցեխը փողոցներում։

ՆԱԻԱՍՏԻՆԵՐԻ ԶԱՑՆԸ

Ես նրանց կոխոտում եմ, ինչպէս ցեխը փողոցներում...

ԺԱՆ (Խափանելով ծովակալի ծայնը, որ շարունակում է իր ընթերցումը). – Անէծք, անէծք... Հայր մեր որ երկնքումն ես, թող քո սուրբ անունն ալ ես չպղծուի, թող գալ վերջապէս քո թագաւորութիւնը, մեր գործերի մէջ միշտ թող քո կամքը կատարուի, տուր մեզ եղբայրական հացը, ներիր մեզ այս ոճիրը, դու որ այնքան ոճիրներ ես ներել։

ԾՈՎԱԿԱԼ (Շեմքի վրայ).—Մէլվիլ, ամեն մարդ թող իր պաշտօնի գլուխն անցնի կուելու համար։

ԺԱՆ (Խլելով նրա ձեռքից Աստուածաշունչը).— Տուր ինձ այդ Աստուածաշունչը։

ԾՈՎԱԿԱԼ.—Դժուել ես, ինչ ես անում։

ԺԱՆ (Աստուածաշունչը պատռելով եւ նրա կէսը ծովակալի ոտքի տակ նետելով).—Թող ձեզ լինի Արիւնի Աւետարանը, քարոզեցէք նրան աշխարհին թնդանօթի հարուածներով. իսկ ես կը վերցնեմ Քրիստոսի խօսքը. նա քո նաւում մի բանտարկեալ է, ես տանում եմ նը-րան ինձ հետ, ես ազատում եմ նրան բանտարկութիւնից։

ԾՈՎԱԿԱԼ.—Դու չես դուրս գայ։

ԺԱՆ (Մէլվիլ).—Պարոն Մէլվիլ, հաճեցէք ծովակալ Մէնսֆիլդից խնդրել, որ իր ազնիւ խոստումը կատարէ։

(Միջոց)

ԾՈՎԱԿԱԼ.— Աւելորդ է, տիկին։ Ինչ որ խոստացայ կը կատարեմ։ (Տանում է Ժանին դէպի բեմի առաջամասը։) Ժան, կաց, պաղատում եմ։

ԺԱՆ.—Իմ բացարձակ պարտականութիւնը հրամայում է ինձ հեռանալ այստեղից։ Դու կատարիր քո պարտքը, իսկ ես կը կատարեմ իմը։

ԾՈՎԱԿԱԼ.—Բայց դու քո կեանքը վտանգի ես ենթարկելու. նա իմն է, նա դուցէ մի կեանքից էլ աւելի է...

ԺԱՆ. –Ո՛չ բարեկամս։ Մեր կամքերը երկու սրեր են միմեանց դէմ քաշուած։

ԾՈՎԱԿԱԼ.—Այդ դէպքում դուք նաւարկեցէք դէպի աջ, դէպի փոքրիկ հրուանդանը. մեր ռմբակոծութիւնը մինչև այնտեղ չի հասնի։ Լաւ հասկացար։ Մենք Մագօրը կը գրաւենք այսօր։ Յաջողութիւն... (Միջոց)

ԺԱՆ.—Մնաս բարով։ (Հագնում է վերարկուն եւ դուրս գալիս։)

ԾՈՎԱԿԱԼ (Մենակ).—Մի նամակ «Զէկ Մէնսֆիլդին. բաց անել այն դէպքում, երբ վտանգի եմ ենթարկուած։» (Պատռում է իսկոյն ծրարը։) «Բարեկամս, քո Ժանը տակաւին սիրում է քեզ։ Բայց ես որ քեզ սիրում եմ, տանջւում եմ ամենասարսափելի տանջանքով, որովհետև անկարող եմ քո մէջ պաշտել իդէալը։ Ո՞վ գիտէ, դուցէ քո աչքերը բացուեն մի օր և դու տեսնես իմ դատի սրբութիւնը։ Դուցէ ապագային, մարդիկ իրաւունք տան այսօրուայ մենաւորին։ (Զէկ սարսռում է, յետոյ շարունակում։) Մեր մեծ յոյսը իրականացել էր։ Քիչ առաջ քեզ այդ մասին ոչինչ չյայտնեցի, որովհետև կամենում էի քեզ խնայել մի վերջին տաղնապ։ Բայց մեր միացած հոգիների զաւակը չպիտի ծնուի երբէք. կեանքի զաւակը մեռաւ։ Իմ խեղճ բարեկամ, մնաս բարով...» (Հեռաւոր թնդանօթաձգութեան աղմուկ։)

ԾՈՎԱԿԱԼ. (Զայնատար խողովակից).—Այդ ինչ է նը-չանակում։

ՀԻԳԻՆՍ (Մռնելով).—Թշնամին մեզ կանխեց։ Բրնէտ յարձակման ենթարկուեց։ Մեզաւորը դու ես...

ԾՈՎԱԿԱԼ.—Ուրեմն մենք էլ կը պատասխանենք իսկոյն։ (Զայնատար խողովակից) Յիշեցէք, որ մեր բոլոր հարուածները պէտք է բացառապէս ուղղուեն Սպիտակ-Ամրոցի վրա։

ՄԷԼՎԻԼ (Հեւիհեւ մտնելով խուց եւ բաց անելով լուսամուտը).—Ծովակալ, մթթէ չէք տեսնում, որ այդ նաւակը գնում է ուղղակի դէպի Սպիտակ-Ամրոց։

ԾՈՎԱԿԱԼ (Վազելով լուսամուտի մօտ)... Թշուառ... նա կորաւ. . . . . .(Նորից լսւում են հեռաւոր որոտներ։). . . . . Մէլվիլ, ամենքն իրանց կեանքի տեղերումն են։

ՄԷԼՎԻԼ.—Այո, ծովակալ։

(Միջոց։)

ԾՈՎԱԿԱԼ (Զայնատար խողովակից).—Բաց արէք կրակը։

ՄԻ ՁԱՅՆ (Դրսից).—Բաց արէք կրակը։

ՄԻ ՈՒՐԻՇ ՁԱՅՆ.—Կրակեցէք։

(Զօրեղ պայթիւն։)

ԿԱՐԱԳՈՅՐ

Հ.Ս.Խ. Հանրապետության Գրադարան
Գ.Գ.Բ. Գրադարան
Ա. Սամուելյան

Տեղեկացման իրաւունքը վերապահուած է։

«Ազգային գրադարան»
NL0312097

6187